492 Արևածագ՝ բարձր լեռնեն,

1. Արևածագ՝ բարձր լեռնեն,
Բարձրյալ Աստծո փառաց միտքն է,
Հոսող գետն էլ անապատեն
Հրաշագործ ձեռքով արված մի փոքրիկ մասն է:

Ես ապշում եմ, երբ տեսնում եմ՝
Նա արել է այդ բոլորն ինձ համար,
Օ, ի՜նչ մեծություն, ի՜նչ փառահեղ,
Հրաշագործ ու կարող է ձեռքը Նրա:

2. Գողգոթայի խաչի վրա
Մեկնեց ձեռքը՝ փրկելու աշխարհն կորած,
Ցավերի մեջ նպատակ կար՝
Հրաշագործ ձեռքով արված մեծ փրկություն:

3. Մեղքից գերված, կոտրված սիրտն
Մեկ հպումից կդառնա նոր՝
Ծնված սիրուց, ազատ՝ մեղքից,
Ստեղծագործված Նրա հզոր ձեռքով:

Ես ապշում եմ, երբ տեսնում եմ
Նրա բոլոր արածները ինձ համար,
Օ, ինչ մեծ բան է գիտենալ՝
Ես փրկված եմ հրաշագործ ձեռքով Նրա:
Կենդանի վկան եմ Նրա՝
Հռչակելու հրաշագործ ձեռքը Նրա,
Օ, ի՜նչ մեծություն, ի՜նչ փառահեղ,
Հրաշագործ ու կարող է ձեռքը Նրա: